

անձամբ 500-5-ր



ՆՈՐԱՅԱՍՆԵՐՈՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԵՍ

◆ Խմբագիր ◆
ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

◆ Տէր Լ. ՏՏՈՐԷՐԻ ◆
Մ. ՍՈՒՐԵԱՆ

Ա. ՏՄԲԻ = ԹԻԻ 5

15 ՓԵՏՐ. 1920

ԳԻՆ 100 ՓՐ.



ՄԵԾՆ ՎԱՐԴԱՆ

ՊՈԼՈՐԱՅՐԻ ԶՆՈՒՆ ՀԵՐՈՍԵ



ՔԱԶՆ ԱՆԴՐԱՆԻԿ
ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԵՐՈՍԵ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ



**ՊՈԼԻՍ
ԵՒ ԳԱԽԱՌ**

Տարեկան (24 քիւ) 60 Դան.

Վեցամսեայ (12 ») 30 »

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան (24 ») 10 Ժրանի

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ.—Առաւօտի հասցէն է՝ Պապը Ալի-
հատուէտի, թիւ 43, Բ. Դրան ճիշդ դիմացը:

ԾՆՈՂՔ ՄԻ ՔԱՇԵԼ ՏԱՐ

Ծնողքնե՛ր պէտք չէ քաշել տար
ներ փոքրիկներուն աղաւները, այդ կեր-
պով կզակի ձեռափոխութիւն յառաջ
կուգայ: Դիմեցէք Աստուծոյ:

ՏՈՒԹ. ԱՂԵՔՍԱՆԴՐ ԷՔՄԷՔՃԵԱՆԻ

որ արտասահմանի մէջ երկար ժամա-
նակ, մասնաւորապէս զբաղած է նաեւ
ազոց կաթի աղաներու դարձանումի
ուսումնասիրութեամբ եւ առով մասնա-
գիտութիւն ձեռք բերած:

Հասցէ՝ Պոլիս, Էմին Էօնի, Եէնի ճամիի
սանգուիներուն դէմ. թիւ 61.

ՆԱԽԻՐԱՏՈՒԹԻՒՆ

Ի նպատակ ներքին գաւառներու
որբերուն

Կէտիկ Փաշայի Ա. Մեարտպեան
փարժարանի՝ երկուսն աշակերտ-
ները ի նպատակ ներքին դաւառնե-
րու որբերու, 50,000 որբերուն
1,500 զըշ. հանգանակած են
ժուժկալութեան օրուան առթիւ
և փարժարանին ճնորդութեան
ձեռամբ յանձնած են Թաղ. Խոր-
հրդին, Կեդր. Ելմո. Յանձնաժո-
ղովին ղրկուելու համար: Այս
հանգանակութեան մասնակցած են
Բարձրագոյն դատարանը՝ 110 զըշ.,
Միջին Բ. » 205 »
» Ա. » 390 »
Տարր. Բ. » 325 »
» Ա. » 470 »

Իրումար

1,500 զըշ.,

Ամեն Հայ պէտք է ունենայ
ԱՄՐՈՂԶԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՔԱՐՏԷՍԸ

Գունաւոր, մեծաւիթ, մանրամասն
ԳԻՆ 30 ԴՐՇ.

Դիմել Պապը Ալի հատուէտի, Ասա-
տուրեան տպարան, Յ. Դարբինեանի:

ՏԲԹ. Բ. Գ. ԿՈՍՏԱՆԴ

Նախկին բօիւկ

Դամասկոսի անգլ. հիւանդանոցին

Կը դարձանէ ներքին եւ վնեւրական
հիւանդութիւններ. Չերմամիզութիւնը
կրան ժամանակի մէջ, նորեւուկ վիժա-
ղեղերու զործածութեամբ: Ֆրանկախոր
914, 1116 եւ մասնագիտական նորագոյն
ղեղերու ներարկում ներով:

Հասցէ՝ Մահմուտ Փաշա, Դալճըլար
խան, պէշ օտաւար:

ՆՈՐԱԶԵԻՈՒԹԵԱՆՑ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՍԱՀԱԿ ՍՎԱՃԵԱՆ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ԲԱԼՓԱՔՃԻՆԵՐՈՒ
ՃԱՏՏԵՆ ԲԻՐՔՃԻՆԵՐՈՒ ԴՐԱՆ
ՃԻՇՏ ԴԻՄԱՅ ԹԻԻ 2

**ԱՊՐԱՆՔ ՏՈԿՈՒՆ ԵՒ
ՃԱՇԱԿԱԻՈՐ**

Մետաքս գուլպաներ, գօտիւմի
թէլա, ձեռնոցներ, լէվանթին, ժա-
պաւէնի ծաղիկի զոյնզոյն սէրի-
ներ, գրուիլէն, թուալէթի պիտոյթ
Ամէն առասկ թուալէթի ֆրիթ-
սիոններ, Ամէն սէզոնի ամենա-
վերջին ձեւ մօտէլներ:


ՄԻԱԿ ՀԱՅԹԱՅԹԻՉ ՆՈՐ ԺԱՄԱ-
ՆԱԾ ՀԱՅԳ. ԺԱՊԱԼԷՆԵՐՈՒ:



ՆՈՐԱՅԱՍՆԵՐՈՒ ՊԱՏԿ. ՀԱՆԴԵՍ

Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Խմբագիր
ԳՐ. Հ. ԳԱԼՈՒԾՅԱՆ



Տէր ԷԼ ՏԽՈՒՆԻ
Մ. ՍՈՒՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ — ԹԻՒ 5

15 ՓԵՏՐ. 1920

ԱԶԳԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Իմ փոքրիկ բարեկամներս,

Նիւթը, որուն վրայ պիտի գրեմ ձեզ, չկարծէք թէ դժուար է ձեր հասկացողութենէն վեր նիւթ մըն է։ Ընդհակառակը, քիչ մը ուշադրութիւն ցնելով շատ աղէկ կրնաք ըմբռնել թէ ի՞նչ է Ազգասիրութիւնը։

Գիտէ՞ք թէ աշխարհի վրայ մարդիկ տարբեր ազգերու կը պատկանին։ Ձեր պատմութեան և աշխարհագրութեան դասերուն մէջ հին ու նոր ազգերու մասին քիչ շատ տեղեկութիւններ ուսացած էք։ Ինչպէս նաեւ աւելի մօտիկ չըջանալէ մը օրինակ առնելով կրնաք ըսել թէ՛ ձեր փողոցին Յոյն կամ Հրեայ կամ Թուրք մէկ տղան ձեր պատկանած ազգին չեն պատկանիր. անոնք տարբեր ազգի մը զաւակներն են։ Ուրեմն։ ազգին ինչ ըլլալը ձեզի բացատրելու համար չեմ ուզեր ձեզ տեսական տաճարաբաններ սպիկեցնել։ Իսկ ծնողքի մը զաւակներն էք, չէ՞։ Ձեր ծնողքը Հայ են ու դուք ալ՝ Հայ։ Ձեր ծնողքին ծնողքները՝ և անոնց նախնայորէն ալ Հայ ցեղէն էին ու այդ կերպով որոշ ցեղ մը սերունդէ սերունդ իր անունը կը տեւականացնէ կարգ մը մարդերու մէջ ու կ'ըլլայ ազգ մը։

Բնականաբար միայն նոյն ցեղին պատկանիր ապահովութիւն մը չէ ազգի մը տեւականութեան համար։ Կան նաեւ ուրիշ բաներ, ինչպէս լեզու, գրականութիւն, կրօնքը, պատմութիւնը, բարքեր, հայրենիք, և այլն, որոնք ազգի մը անդամները իրարու դուրս կ'ապիր են։ Այն

համարակաց կապերը համարիւթեան կապին հետ ա'լ աւելի իրարու
կ'ամբաստնեմն ազգի մը անհատները, ու այդպէսով կը տեսն ազգ մը:

Մարդկութիւնը կրնանք նմանցնել պարտէզի մը, ուր տարբեր ազ-
գեր, ինչպէս տարբեր ծառեր, կուգան զարդարել այս մարդկութեան
պարտէզը, ու այդ կերպով աւելի կը գեղեցկացնեն զայն: Ինչպէս տար-
բեր տեսակ ծառեր տարբեր գեղեցկութիւն, և օգտակարութիւն ունին,
նոյնպէս ալ տարբեր ազգեր տարբեր օգտակարութիւն ունին աշխարհիս
մէջ: Պէտք է արհամարհել ուրիշ ազգերը: Կան կարգ մը մարդիկ, ո-
րոնք կը խորհին թէ պիտի գայ ժամանակ մը երբ ազգերու բաժանում-
ները պիտի վերնան և մարդիկ այս կամ այն ազգին պատկանելու տեղ,
պիտի ըլլան աշխարհաքաղաքացիներ, որոնց ազգը մարդկութիւնն է և
հայրենիքը՝ աշխարհ: Այս կրնանք նկատել հեռաւոր գաղափարական
մը. բայց ներկայիս գիտենք թէ կան տարբեր ազգեր ու ժողովուրդներ:
Ինչպէս որ մարդ մը իր բնատանիքին անդամը աւելի գիւրաւ կը սիրէ
քան ուրիշ բնատանիքի մը անդամը, այնպէս ալ մարդ մը իր ազգակիցը
աւելի գիւրաւ կը սիրէ քան ուրիշ ազգի պատկանող անհատ մը:

Ուրեմն, կը տեսնէք թէ ազգեր կան աշխարհիս վրայ և իւրաքան-
չիւրս կը պատկանինք ազգի մը ու կը սիրենք մեր ազգին պատկանող ան-
հատները: Ահա ա'յս է ազգասիրութիւնը: Նուիրական պարտականու-
թիւն մըն է ամէնուս համար սիրել մեր ազգը և ծառայել անոր: Բայց
այս առթիւ պիտի ուզէի կարգ մը թելադրութիւններ ընել ձեզ:

Նախ՝ ամէն մարդ պէտք է սիրէ իր ազգը. բայց այս ստեղծութիւն
չենթադրեր ուրիշ ազգերու համար: Ինչպէս մենք կը սիրենք մեր ազ-
գը, ուրիշներ ալ կը սիրեն իրենցը. և այս շատ բնական է: Հետեւաբար
ազգասէր ըլլանք, բայց ոչ ազգայնամոլ:

Երկրորդ՝ ընդունինք թէ ուրիշ ազգեր ալ, ինչպէս մերը՝ պէտք է
ունենան իրենց բաժինը արեւին տակ: Արդարութիւն չէ որ զօրաւոր և
գոնասէր ազգեր ճնշեն տկար ազգերը ու բռնադատեն զանոնք սարկա-
քաւր կրեղ լուծ մը որ ապեղի է իրենց: Աշխարհի մեծ ազգերը բարոյա-
կան շատ մեծ պատասխանատւութիւն ունին այս մասին:

Երրորդ՝ չմոռնանք թէ տարբեր ազգերու համագործակցումով կը
կազմուի մարդկութիւնը, որուն մէկ անդամն ենք իւրաքանչիւրս: Մենք
Հայ ըլլալով հանգերձ մարդ ալ ենք, ու քոյր ժարդիկ մեր եղբայրներն
են: Ինչպէս մեր ազգին բարօրութեան ու զարգացումին, նոյնպէս քոյր
մարդկութեան բարօրութեան ու զարգացումին փափաքով ու դործակ-
ցով ըլլալու ենք: Ահա այս է համամարդկային եղբայրակցութեան խոչը:

Հետեւաբար, սիրելի ընթերցողներս, այս պարզ թելադրութիւն-
ները ձեր միտքերուն մէջ ունենալով կրնաք ըլլալ ուղածնուդ չափ
ազգասէր: Այդ պատճառ մը չպիտի ըլլայ որ փաստակարար տրիւնքներ
ստալ զան ձեր այդ զգացումէն: Իրրու Հայ սիրենք մեր ազգը, աշխա-
տինք անոր բարօրութեան ու զարգացումին համար: Կամ տարբեր խօս-
քով՝ մենք իւրաքանչիւրս աշխատինք երջանիկ ու զարգացեալ անհատ:

Եւր ըլլալու, որովհետեւ մեր ազգը մեզ նման անհատներու ամբողջութիւնն մըն է: Այս բնութեամբ ազգասիրութիւնը օրհնութիւն մը պիտի ըլլար աշխարհիս բոլոր ազգերուն համար: Մերենք մեր ազգը, սիրենք բոլոր մարդիկը իրեն մեր եղբայրները ու ահա այս է կրօնքին վսեմ յաւոյտիանը: Երբ մենք չենք կրնար սիրել կարգ մը ազգեր, ոչ թէ այդ յաւոյտիանը: Երբ մենք չենք կրնար սիրել կարգ մը ազգեր, ոչ թէ այդ յաւոյտիանը: Այլ անոնց մէջ դանուած չարիքը, բռնութիւնն ու անիրաւութիւնը կ'առնենք: Աշխատենք որ մեր ազգն ալ ըլլայ այդ ասելի ազգերէն մէկը: Ծշմարիտ ազգասիրութիւնը մեծ առաքինութիւն մըն է:

ԱՍՏԵՂԱԶԱՐԴ ԴՐՕՇԸ

Աս բերթուածը գտնուած է բարձին տակէն Ամերիկայի Միացեալ Նահանգներու զինուորի մը, որ հիւանդանոցի մը մէջ մեռած է:

Մեզ կը պառկիս ես ըլլալ հուն,
Ունիս սակայն խոկ մը կամ հոգ,
Երբ աչկերն իմ բանամ արթուն՝
Հո՞ւս պիտի՝ ըլլամ քե հոն՝ արդեօք:

Ու յոգնասանց գլուխս արդէն
Իսկ սիրող կուրծք մը կ'որոնեմ,
Ուր կըսրբնի՝ ու ապաւեն
Հանգիստ մը քաղցր զգայ զոնեմ:

Քաջավարձ աչ անհրա տան
Մոռցաւ բոլոր իր հրնարներ,
Այսպէս երկար քալել համբայ՝
Տրկար ծունկերս ա՛յ չեն գորեմ:


Անգլ.է.

Եռանդ եւ ոյժ, կորովս համակ
Ջիս լսեցին, անգո՛ր եմ ես,
Այսպէս չի ես դժկամակ,
Ա՛խ, վերջապէս, ա՛խ, վերջապէս:

Կես օրուան գործս կատարեցի,
Աւելիին ա՛յ չեմ կարող,
Երկայնամի՛տ Աստուած, Քեզի՛
Կը բերեմ սիրտս ապաշխարող:

Տերոջ դռօթն փառեցի՛ արդ՝
Ծալներն իսկ մութ ըլլան՝ եթե,
Այս դրօ՛շն ալ աստեղազարդ
Ձեզ պիտի՝ Անոր՝ առաջնորդ:

ԳԲ. Հ. Գ.



Ա Ն ՈՒ Շ Խ Օ Ս Ի Ե Ր

Անուշուրեանք խօսուած մեկ խօսք.
Կամ մեկ շարժում, արցունք մը սոսկ
Կոտրած սիրտին կ'ըլլան դարման,
Տարով բախտին անկեղծութեան:

Կայուածք մ'ու խօսք մ'անբարեւեր
Կը բռնեցնեն զիրգ կոկոններ,

Անգլ.է.

Ժրպիտ մ'անոնց կեանք պիտի տար՝
Փայլեցնելով ժամեր խաւար:

Ուրեմն, ոչինչ բան մի կարծեմ
Խօսիլ անուշ, բարի խօսքեր,
Դեմք ու խոհերդ հարկաւ կրնան
Սիրտ մը շինել, կամ կոտորել զայն:

ԳԲ. Հ. Գ.

ԱՌԱՋՆՈՐԴ ՄԱՆԿԱՆՑ

Գ.

Գոհ եմ ձեզմէ, պղտիկներս,
Հաւանաւորը սորվեր էք և լաւ
հասկցեր էք անոր խմատը, քա-
նի որ դուարի թռչնիկներու պէս
կը ցատկէք ձեր անկողիններէն
դուրս: Անշուշտ հիմա կը սպասէք
որ մայրիկը դայ և դգուանքնե-
րով հագուեցնէ ձեզ:

Սակայն խորհեցէք անդամ մը,
որքան դժուար է մայրիկը առա-
ւօտեան այս պահուն:

Սիրելի պղտիկներս, ամէն ըն-
տանիքի չի վիճակիր մէկ կամ ա-
ւելի սպասուհիներ պահել տանը
մէջ: Ձեր մայրը ձեր տան տիրու-
հին է, ինչպէս նաեւ դատարա-
րակուհին, կարուհին, խոհարա-
րուհին և սպասաօխանատունը ու-
րը այն բաներուն, որոնք կը
կատարուին տունէն ներս:

Հակառակ այսպէս ըլլալուն
սակայն, անիկա բնաւ չորտնջար
ու հպարտ կը զգայ ինքզինքը,
առանձինն կարենալ ծառայելուն
համար ընտանիքին ու իր հոգե-
հատորներուն:

Հետեւեալը որքան աւելի
սիրելի էք դուք ձեր մայրը և
ջանալու էք ձեր փոքր աշխա-
տութիւններով թեթեւցնել անոր
բեռը:

Ո՛րքան ուրախ պիտի ըլլայ
ան՝ եթէ դուք փոխադարձաբար
իրարու օգնելով, հագուիք,
լուացուիք, սանարուիք և «բարի
լո՛յս, մայրի՛կ» ըսելով խնդրէք
անկէ ձեր համրայրներն ու նա-
խաձայր: Պղտիկ մը որ կը ջանայ
օգտակար ըլլալ իր ծնողքին, ան-

տարակոյս ան պիտի ըլլայ նաեւ
ապագային ընտանիքի մը, ազգի
մը, մարդկութեան օգտակար,
սիրելի և յարգելի անհատ մը:

Միայն թէ պէտք է գիտնալ
որ, դուք դեռ շատ փոքր ըլլա-
լով, փորձառութիւն և գիտու-
թիւն չունիք, օգտակարն ու
փառապարը իրարմէ խնայն գա-
նադանելու: Ուստի կատարեցէք
միայն այն աշխատութիւնները,
որոնք մայրիկին կողմէ կ'առա-
ջարկուին ձեզ: Հակառակ պա-
րագային կրնայ ըլլալ որ սխա-
լայէր առնէք փոքրիկ Սիրածի-
նին պէս:

Հետեւեալ տողերէն պիտի ի-
մանաք թէ ինչ է ըրեր Սիրածինը
մայրիկին օգնած ըլլալու համար:

ՏԱՆՏԻԿԻՆ ՍԻՐԱՄԻՆ

Երեկ, մայրս զայրուցիմ,
Դեմք եղած դեփղեղիմ,
Քիչ մնաց որ զիս ծեծեր,
Այնչափ դպի ելած եր:

Վախեա լեզուս կապուեցաւ,
Շրւարեցայ իսկ, իրաւ.
Իսկոյն մուկի մը նրման
Մըսայ անկիւն մը անձայն:

Հաւատացէ՛ք սիկիմներ,
Եւ յարգելի պարուններ,
Ձեի գործած ես յանցանք,
Մօրս օգնել եր իմ ջանք:

Մինչ փոքրիկ եոյրն իմ կիզա,
Վուլար բնդայ, ա՛, բնդայ,
Խորհեցայ քե ինչո՛ւ լայ,
Փորն անօրի երբ չըլլայ:

Աստի բացի դարակը,
Շերս մը հաց—աս բարակը,
Մեր Լիզային հով բերի,
Որ իր լացը շուտ դադրի:

Բայց հագիլ քե մեկ պատան
Տըխ բերանն՝ անդադար
Ղը՝ ղը՝ ղը՝ ղը՝ կ'ընէր ան.
Բան մը կ'ըլլար մեր Լիզան:

Ձեր ծամեր եւ չէր կլներ...
Լիզան ախի խեղդուէր...
Նքե մայրիկն իմ փութով,
Ձի հասներ շուտ գալ մեր հով:

ՄԱՅՐ—ԵՐԿԱՐ

ՀԱՐՔ ՄԸ ՈՐ ՀԱՋԱՐ Կ'ԱՐԺԷ

Ձր մը Պր. Ազուէս իր բարե-
կամ կատունին հանդիպեցաւ ու
բաւաւ անոր. «Դուն կը կարծես
թէ չաւս բաներ կ'ընաս ընել, բայց
դուն ինձի պէս խորամանկ չես:
Ես իմ հնարադիտութեան տուրա-
կիս մէջ քեզմէ հարիւր անգամ
աւելի հնարքներ ունիմ. վստահ
կ'ընաս ըլլալ որ երբ բարակները
դան չպիտի յաջողին դիւս բռնել:»

«Է՛հ, ես հաղիւ մէկ հնարք
ունիմ, պատասխանեց կատուն:
Բայց դիտե՛ս որ երբ առիթը գայ
դայն գործածելու, իմ մէկը աւելի
կ'արժէ քան քու հարիւրդ:»

«Փո՛ւճ խօսք, գոչեց աղ-
ուէսը:»

«Է՛հ, կը տեսնենք», բաւ
կատուն:

Ճիշդ այն պահուն փողի ձայն
մը լսուեցաւ ու բարակներու
վոհմակ մը յառաջ աւազաց հաջե-
լով ու թնձկալով:

«Տոտրակդ աղէկ պրպոյտ, բա-
րեկամ», գոչեց կատուն աղուէ-
սին, «հիմա պէտք պիտի ունե-
նաս բոլոր հնարքներուդ: Գալով
ինձի, նայէ, ահա այս է իմ միակ
հնարքս:» Ու մինչ այս կ'ըսէր կը
ցատկէր բարձր ծառի մը վրայ,
ուր չէին կրնար ելլել բարակները:
Կատուն ծառին կատարէն կը

դիտէր խորամանկ աղուէսը, որ
կը գործածէր իր բոլոր հնարքնե-
րը՝ այս ու այն կողմ վազվազելով:

Բայց անօգուտ բան, ուր որ
երթար՝ բարակներն ալ կը հեռե-
ւէին իրեն ու վերջապէս բռնե-
ցին զայն:

«Է՛հ, ուրեմն, բաւաւ կատուն,
կը տեսնեմ թէ աղէկ միակ հնարք
մը աւելի կ'արժէ քան հազար
խեղճ հնարքներ:»

Անգլ. Է

Գ. Հ. Գ.

ՈՂՋՈՅՆ, ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐ

Բանակի ժողովան առթի:

Ողջո՛յն քեզ, ո՛վ Հայ գինուր,
Անխախտ կորով Հայ Կամփին,
Որուն ուժեն գերեքգոր՝
Պիրի կապաններ կը բախին:

Ողջո՛յն քեզ, ո՛վ Հայ գինուր,
Հայրենիքի քաջ պաշտպան,
Թշնամիներդ իսկ բոլոր
Կը յարգեն կամփդ անխափան:

Ողջո՛յն քեզ, ո՛վ Հայ գինուր,
Զոհողութեան մեծ պատկեր,
Նրբիւնովդ անսովոր՝
Օ՛ն, կասարէ քու պարսէր:

Ողջո՛յն քեզ, ո՛վ Հայ գինուր,
Պապերուդ պէս քաջամարտ,
Անոնց փառքին դարաւոր
Դուն ժողովագորդն ես հրապարտ:

Ողջո՛յն քեզ, ո՛վ Հայ գինուր,
Դուն անկրման ո՛վ հերոս,
Փօրէ բազկովդ մեծագոր՝
Փաղանգները բարբառոս:

Ողջո՛յն քեզ, ո՛վ Հայ գինուր,
Հայ քաջութեան նրշանակ,
Վազէ, սուրա օրէ օր,
Յաղթանակէ յաղթանակ:

Ողջո՛յն, ողջո՛յն, բիւր ողջոյն,
Եռագոյնիդ Հա՛յ գինուր,
Համբո՛յր, համբո՛յր ջերմագոյն՝
Կայծաւ կ'սուրիդ, Հա՛յ գինուր:

ԿԻՂԻՆԵՅԻ

ՔԵՏԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԻ ՕՐՈՐՈՑԸ ԿԱՄ ՉՈՒՆ

Ե.

Նախատաղմը. — Միարջիշի և ձուի խորշեր. — Նախատաղմին մէջ կենդանին. — Ժառանգականութեան օրէնքը.

Նախ կը թուի թէ խորշը բաժնուելէ զատ ոչինչ կ'ընէ, որովհետեւ երկուքի բաժնուած նախահիւթը՝ կը տեսնենք թէ արդէն չորսի բաժնուած է: Այս բաժնուած խորշերը և անոնցմէ բաժնուածները կը շարունակեն միշտ բաժնուիլ՝ մինչեւ որ բուն գեղնուցը իր ողորկ և խզաշին բնութիւնը կորսնցնէ և խորշերու փոքրիկ կայս մը ըլլայ: Այս խորշերը կը խճողուին, կը տափակնան և իրարու փակչելով ներքին աստառ մը կը ձեւացնեն: Այս աստառը, որ նախապէս գեղնուցի խաւ մըն էր, հիմա խորշերու խաւ մըն է (blastodermic membrane) և նախատաղմին (embryo) մարմինն է:

Ան ալ անձեւ բան մը չէ, այլ իրական ապրող կենդանի մըն է: Անոր խորշերը միարջիշի պէս տարրեր արարածներու չեն բաժնուած, այլ կազմած են փոքրիկ հասարակութիւն մը, որուն մէջ խրաքանչիւրը իր գործը ունի: Միարջիշի խորշը ամէն բան իրեն համար ընելու է. հետեւաբար շատ պարզ է. անոր կեանքը վայրենի կեանքին կը նմանի, մինչդեռ ձուին խորշը բարձրօրէն քաղաքակրթուածի կեանք կ'ուարի՝ իրեն և ուրիշ խորշերու համար գործելով: Այսպէս կենդանին

երբ կատարելագործուի՝ ընդարձակ քաղաքէ մը աւելի անհատ խորշերէ կը բաղկանայ, որոնք կը կազմեն հասարակութիւն մը: Այս խորշերը անանկ մը կը գործեն որ խրաքանչիւրը իր շրջանակին մէջ գտնէ կարծես: Մորթի խորշը աղէկ մորթ, իսկ սակորինք՝ սակոր կը պարտաւորէ: Այս խորշերը բնաւ բանիծող չեն ընել՝ եթէ մարմինին չարաչար գործածութեամբ զանոնք չապտաւորեցնենք, վիճակ մը գոր հիւանդութիւն կը կոչենք:

Նախատաղմ վիճակի մէջ խորշերը իրենց գործը աղէկ կը կատարեն: Անոնց այդ անկատար վիճակին մէջ կենդանի մը չենք ճանչնար, ինչպէս գորս մը չենք ճանչնար շերտիկի մը մէջ, մինչեւ որ այդ փոխութիւնը շուտով անասիրենք:


Ինչ պիտի ըլլայ ան, ձուի, գորս, մանկիկ, չենք գիտեր: Որովհետեւ ամէն կենդանական կեանք նախ պէտք է քալէ այս ճամբայէն: Պէտք է նախահիւթը խորշ և խորշ՝ նախատաղմ ըլլայ: Թէեւ որոշ շրջանի մը մէջ կենդանիներու ձուային կեանքը նոյննայնման է, նորէն ալ տեղ մը ծնողական դրոշմ մը կայ, որ սրկուց կեանքը որոշ ձեւ մը տանել կը ստիպէ: Միշտ ձաղուկին դարգացումը նկատադրելով կ'ըսէ. «Բայց տես, այս աստուածային քունին մէջ ան կը ճանչնայ իր, մայրիկը և անոր մոզական ջերմութիւնը: Ան կը սկսի երազել շարժում, մայրիկին նմանութիւնը կ'երազէ. անոր աւազին գործը, նսնձ սիրտ գործ մը, պէտք է նմանի մայրիկին:»

Արարածը այդ վիճակին մէջ
 թէեւ խորշերու խուճիւրն է, քայց
 ներքին աւժէ մը մզուած՝ կը հնա-
 դանդի ժառանգականութեան օ-
 ղէնքին և կը նմանի իր ծնողքին :
 Կ'առնենք ձու մը, որուն մէջ
 խորշերու խաւը սկսած է կաղ-
 մուիլ, կը տեսնենք թէ այդ խա-
 ւը կը կնակի տառաւէ բաղկացած
 է. աշտաջինը որ խիտ է՝ կենդա-
 նիին մորթի, սակորթի, մկանի նման
 խիտ մասերը, և ներքինը որ թոյլ
 է՝ աղիքի և այլնի նման նուազ
 խիտ մասերը կը ձեւակերպէ : Իսկ
 չի փոխուած զեղնույր նախա-
 սաղմին սնունդը կը կաղմէ :

ՄԱՐԿՐԻԹ ՌՌՐՆԸՐ ՄՈՐԼԻ

Ա Ռ Ա Կ Ա Ն Ի

ԱՌԱԿ-ՔԱՌԵԱԿՆԵՐ



Աղուորիկ կնկան՝
 Անճորնի սպասունի.
 Այսպէս խենդ բաներ կան
 Յանախ մեջն աշխարհի :



Ամպին մեջն անձնու է,
 Իսկ վրան արեւ է.
 Դեանքն—արցունք և ծրպիս—
 Մանեակ մ'է մարգարիս :



Կ'ըսեն. Անճոսն է լեռուեր,
 Անօրին ձեռնն է նայեր.
 Զրաւորէն ի՞նչ կ'ուզես,
 Ա՛ն ալ խեղն է լեզի պէս :



Շուտ անգամներ անուշ «չեռն»
 Աղէկ է կոչոս «այր»էն.
 Խօսիլ գիտնայ արուեստ է.
 Խօսիլը խորնէ, պատաստէ :



Ամանդ ինչ բրդես՝
 Իգալդ ան կուգայ,
 Ըրածդ կը գտնես,
 Աւրիս հար չիկայ :

Ազանէն բա՛ն ուզեցիր,
 Զուրիս մեջ ծակ փորեցիր.
 Ազան սիրքը չունի գուր.
 Մի ողորտ անօգուտ :



Անուշն ուզողն անպատեհ,
 Գիտէ համը լեղիին.
 Փորձառութիւն մը՝ հազար
 Խօսիւ ազդու է ինքնին :



Անխելիք ծընած տեղն է ուզած,
 Խելօք՝ հանգիստ քսած տեղը.
 Մի՛ս զգացումիդ չըլլաս կապուած,
 Խելիդ ալ գործածէ քորմար տեղը :
 ԱՌԱԿԱՆՈՍ

ՀԱՆՃԱՐԵՂ ԲԱԺԱՆՈՒՄ

Իւրաքան մէկը կը մեռնի և իբր
 ժառանգ կը ձգէ 17 ուղտեր, զորս
 հետեւեալ համեմատութեամբ իր
 երեք տղոց կը կտակէ. — Անդրա-
 նիկը սղոթ տառնայ կտակին կէտը,
 երկրորդը մէկ երրորդը և կրտսերը
 մէկ իններորդը : Կտակին գործա-
 դիրը չկրնալով ուղտերը կիտել,
 անմիջապէս կ'երթայ գասրին խոն-
 դիրը պատմելու : Այս վերջինը
 երեք տղաքը կը կանչէ և ստեղծ
 քերել կուտայ նաեւ 17 ուղտերը.
 յետոյ մէկը կը զբիւրէ իր մէկ բա-
 րեկամին, ուրիշ ուղտ մը փոխ
 առնելու համար, որով այժմ առ-
 եանք 18 ուղտ կը գտնուի :
 Գառլոն կը սկսի գտնունք բաժնեկ
 կտակին համեմատ : 18 ուղտին կէ-
 տը, այսինքն 9 ուղտ, անդրանի-
 կին կը յատկացնէ, մէկ երրորդը,
 այսինքն 6 ուղտ՝ երկրորդին, իսկ
 տասնորդին իններորդ մասը, որ
 է 2 ուղտ՝ կրտսերին : Ընդհանուր
 գումար 17 : Տասնորութեանը աւել-
 ար, որ այս գծուար խնդիրը լու-
 ծելու ծառայեց, մեծ շնորհակա-
 լութեամբ կը վերադարձուի իր
 տիրոջ : Իսկ տղաքը չեն բողոքեր,
 քնդհակառակը գոհ կ'ըլլան, քանի
 որ իւրաքանչիւրը իրեն տառնալիք
 բաժինէն աւելին առած եղաւ :

Այլիսար Փրզմ. Ե.

ԶԱՐՅՈՒՐԱՆՔԸ ԿԱՐՆՈՅ ՄԷՋ

Գրեց՝ ժ021. Բ. 1.

Թարգմանեց Զ. ՅՈՎԱԿԻՄ ՏԵՐ-ՄԱՅԻՍԻԱՆԸ
Վիեննական Մխիթարեան

ԺԳ.

Իրիկուներ հիւրասիր ունեցաւ
սուս սպաներէն, որոնց, բազմա-
նեքուս պետը, Գորիս էլիւզին,
պատմած էր փոքրիկ աղջկան
պատմութիւնը: Ռուսերը իրեն
վերադարձուցին իր սուներ: Սրբի
և Աթինա առաջուան պէս ըս-
կան ծառայել: Սոփուս և իր մայ-
րը ընտելեցան իր մօտ փոքրիկն
Բաղրատի հետ: Մատաթեան է-
ֆէնտի և Նանահէտտին հօժա կու-
գային զինք տեսնել և անոր դասեր
տալ: Անուշաւան շարունակ իր
տան տանիքին վրայ կ'ելլէր, և
հոնկէ ճամբան կը գիտէր թէ ար-
դեօք ճիւղորներ կուգային: Նոյնը
կընէր նաեւ Աննա: Օր մը, ճամ-
բուն մէկ դարձուածքին վրայ Ա-
նուշաւան տեսաւ ճիւղոր մը, որ
ճիւղն գաւաղին վրայ մանչուկ մը
կը բերէր... սիրտը սկսաւ ուժգ-
նօրէն բարախել...: Յանկարծ
բարձր ճիչ մը արձակեց: Անուշա-
ւան ճանչցաւ իր եղբայրը և իր
հայրը:

ՊԱՐՈՅՐԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ա.

Պարոյր և իր հայրը կը վիճա-
բանէին լրջօրէն բերուած նոր
գորգերու տեսակներուն վրայ,
որոն պարսկ ուղտապանները
աւարտած էին խանին մէջ:

— Կը կարծես, որ երկրին ա-
մէնէն լաւ բուրդէն գործուած ըլ-
լան այս գորգերը, այս մարդիկ
յիմար են, իրենց գեղեցիկ գոր-
գերը հիւսելու համար Դերմանիոյ
գէշ ներկուած բուրդերը կը գոր-
ծածեն: Տե՛ս սա գոյները:

Հաղիւ թէ Զաւարեան էֆ.
վերջացուցած էր այս բաները,
խնայն քառակուսի բակը խու-
ժանէ մը պաշարուեցաւ, ընկե-
րակցութեամբ մէկ քանի ժան-
տարմաներու, որոնք չափուշէ մը
կ'առաջնորդուէին:

— Դժբախտութիւն... Ի՞նչ
կը պատահի դարձեալ... հեծեծեց
խեղճ վաճառականը ապշահար...

Ի՞նչ կը պատահէր... շատ
պարզ էր: Վալիին հրամանաւ
փոքրիկ գունդ մը զինքը ձերբա-
կալելու կուգար:

— Պարո՛յր, պառայ դժբախ-
տը, վաղէ՛ իմաց տալու մօրդ...

Երիտասարդը կ'երկմտէր ու
չէր գիտեր թէ հօրը հետեւէր թէ
Հայոց Թաղը իջնար:

Իր վարանս մը շատ չտեւեց
երկու հսկիւն ձեռքեր ինկան իր
ուսերուն վրայ: Սախալուեցաւ հե-
տեւիլ իր հօրը, անցնելով նեղ ու
աղմկալից փողոցներէ, ուր կատա-
ղի բաղմուսիւն մը խոնուած, չէր
քաշուէր աշ ու ձախ նախատինք-
ներ և հարուածներ տեղալու:

Երկու Հայերը բանտարկուեցան :

Ի դուր կը հարցնէին իրարու խնամալու համար իրենց յանցանքը , ու չէին կրնար հասկնալ : Իրենց յանցանքը :

Անմիջապէս հասկըցան :

Երկուքն ալ պատերազմական ատենը առաջնորդուեցան , և խիստ հարցաքննութեան մը ենթարկուեցան , որուն ընթացքին հասկըցուեցաւ որ գիրենք կ'ամբաստանէին դաւադրութեան յանցանքով , Սուլթանը , Լնդէր փաշան , նախարարները ու Կարնոյ վալին ապանակու դաւադրութեամբ , հասկըցան թէ գիրենք կ'ամբաստանէին իրենց հայրենակիցները ապստամբեցնելու և հասարակութեան ինչքը գողցած ըլլալու յանցանքով և որ աւելին է ի հաշիւ Ռուսիոյ և Անգլիոյ լրբտեսած ըլլալու սովորով . . . վերջապէս այնչափ բաներով , որ ինզձ վաճառականին ապուշութիւնը անհուն էր :

Երդում բրաւ թէ ինքը աշխարհիս ամենէն հաւատարիմ վաճառականն էր , երդում բրաւ Բրիտանի վրայ ու երդում բրաւ Նոյնիսի Մուհամմէտի վրայ և ամէն այն բաներուն վրայ , զորոնք ուղեցին :

Ոչ մէկ բան օգուտ չբրաւ : Դատաւորները որոշեցին որ մօտիկ միայն կրնար պատժել այսպիսի ծանր յանցաւոր մը . . .

Վերջապէս դատաւարութեամբ կախուելու . . .

— Ի՞նչ պիտի ըլլայ տղա . . . կը հաւաստէր զժբարիսը յուսահատութեամբ :

Դատաւորներէն ոմանք , օրոշեցին , որ հայու կտորը շատ բաւ էր կախաղանի համար , ուրիշները կը միտէին ուժգնօրէն դանաժուծել , ոմանք ալ կարծիք կը յայտնէին ըսելով որ այս աղան շատ կը վայելէր փաշային պալատին մէջ իբր գերի ծառայեցնել :

Բ .

Պարսը և իր հայրը բանտին մէջ կը գտնուէին : Անոնք առանձինն էին , ուրիշ մեծամեծ Հայեր ալ միացած էին անոնց :

Խեղճերը գիտէին թէ պիտի կախուէին , բայց չէին գիտեր թէ ե՞րբ էր իրենց տանջանքի օրը : Անոնք մշտապէս անձկութեան մը մէջ էին :

Շատ անգամ իրենք կը կարծէին թէ հրապարակին վրայ պիտի ապանակուին , ա՛յնչափ բանտին դռներուն առջեւ ամբոխին աղաղակները ապառնական կը դառնային : Անոնք իրենց ընտանիքներուն վրայ կը մտածէին , որոնք անպաշտպան մոլեռանդ թուրքերու և քիւրտերու ձեռք ինկած էին :

Իբր անունդ իրենց (իբր թէ հաւերու) կը բերէին ամէն առաւօտ մեծ պնակ մը խաշուած ցորեն , խեցաման մը ջուր ու սեւ հացի մզլոտած կտորուանքներ , որոնք աւելի մոխրով շաղուած էին քան թէ ալիւրով :

Բանտարկեալները վերջապէս տարուեցան դատաւորներուն առջեւ : Ամենքն ալ տժգոյն էին իրենց վերջին ժամը հասած կաթճելով :

— Շնորհակալ եղէ՛ք մեր բարի վեհապետին , հաւատալիաւնքու հրամանատարին . . . ահաւասիկ տղամաղիկ է ձեզի հարկը :

ներու, անպիտաններ, շան դաւակ-
ներ: Անիկա կ'արտօնէ ձեր գլու-
խը գնել սակիով: Փրկանք վճա-
քեցէք ու ձեր կեանքը պիտի ա-
զատի...:

Որովհետեւ Չամարեան էֆ.
տաննէն հարուստ վաճառականն
էր Կարնոյ մէջ, իրեն և իր տղուն
համար սրոշուած գինը ահագին
էր, 1000 սակի հնչուն դրամ:

— Ի՞նչպէս կ'ուզէք որ ես
վճարեմ այս ահագին գումարը,
հնչուն դրամով... դացէք դրա-
ւեցէք խանս ու ապրանքներս,
կարծեմ թէ մեծապէս պիտի շա-
հիք...:

— Այդ արդէն եղած է... պա-
տասխանուէցաւ իրեն...:

Փ.

Առաւօտ մը, բանտարկեալները
բանտէն դուրս հանեցին, և նախ
զիրենք գոմէշի հօտի մը պէս տեղ
մը արգելափակեցին և յետոյ քչե-
ցին դէպի քաղքին դուռը՝ շրջա-
պատուած զինուորներով և ժան-
տարմաներով: Ասանք կարծեցին
թէ Կարնոյ պարխաշներուն տակ
պիտի մահացնեն զիրենք:

Իայց մեծ զարմանքով տեսան,
որ զիրենք քաղեցնել տուին ամ-
բողջ օրուան մէջ հանդիսաւ ձգելով
միայն և միայն քառորդ ժամ մը
իրենց ցորենի բաժինը ուտելու
համար:

Պարոյր շատ խորունկ կը
մտածէր:

— Հայրիկ, ո՞ւր կը տանին
մեզի, գիտէ՞ք: Այս համբան
հանչաց, Երզնկայի համբան է,
վաղը պիտի հասնինք Մամա-Խա-
թուն:

(Շարունակելի)

ՀԱՆԵԼՈՒԿԻ ԲԱԺԻՆ

ԲԱՌԵՂՇՈՒԱԾ

ԹԻԻ 7

1.	0
2.	. 0 .
3.	. 0 .
4.	.. 0 ..
5.	.. 0 ..
6.	... 0 ...
7.	... 0 ...
8.	.. 0 ..
9.	.. 0 ..
10.	.. 0 ..
11.	.. 0 ..

1. Հայ տառ մը:
2. Նուէր բառին համանիշ մը:
3. Ոգեկից ըմպելի մը:
4. Այն տեղը ուր Յիսուս ծնաւ:
5. Հայաստանի մէկ լեռը:
6. Համեմ մը:
7. Խորունկ տեղ մը:
8. Անկողնի ծածկոյթ մը:
9. Պիտանի մետաղ մը:
10. Մեծ մարդարէներէն մէկը:
11. Քիմիական նիւթ մը:

Չերօնեղուն զիրերով վերէն
վար կարդալ յաւէտ յարգելի Հա-
յու մը անունը:

Պիլեհիկ

Բ. Ա.

ԲԱՌԵՂՇՈՒԱԾ

ԹԻԻ 8

Ամբողջովըս երկուսանի
Գործիք մըն եմ շատ պիտանի.
Ինծի երբեմն դուն ալ, արդաս,
Դպրոցին մէջ պէտք կ'ունենաս:
Առաջին վանկս ըզրազում մ'է,
Ձար մայրիկդ ալ կը կատարէ.
Իսկ երկրորդըս բառ մըն է, զոր
կրնանք ըսել իմ և քու մօր:
Կրնո՞ջ գործ մը, զոր կ'ընէ կին,
Խօսիլ կ'ըլլա՞յ տակէ մէկին:
Դիտցի՞ր, ուրեմն, ո՞վ հայ արդաս,
Պէտք եղածներն ըսի ահա:

ԳՐԻԶ-ՔՆԱՆԲ

PUSSY'S PHOTOGRAPH

Come kitten sweet, please sit quite still
While I your photo take,
Now lift your little chin a bit,
Your tail you must not shake.

See, all is ready, look just here
My finger shows the place.
You must not laugh or cry at all,
I would spoil your pretty face.

Now kitten dear, I am ready quite.
The needful click to make,
I hope your picture will be good
Without one small mistake.

My darling pet, why did you move?
You've spoilt it all I fear.
Why did you at this moment wish
To wash your pretty ear?

We'll try again be good I pray,
Why run like this around?
See, look at me with your large eyes,
Obey without a sound.

Be quick, now pose, my playful pet,
Yes, now you look quite nice.
Click! all is over, run and play
And chase out naughty mice.

But wait, lap up this nice sweet milk
And thank me with a purr.
Then let me with caresses kind
Brush up your coat of fur.

'Tis school time now I must be off
With all my books and state.
Good bye my pet, I must run quick
Or else I shall be late.

A. M. BURGESS

FOURTH AND FIFTH ENGLISH LESSONS

This—տհիս—Այս
That—տհէթ—Այդ
Here—հիբբ—Հոս
Where—հուէք—Ո՞ւր
Now—նաուն—Հիմա
Ever—էգրբ—Երբեք, մըշտ
Yes—եէս—Այո
In—ին—Մէջ
Man—մէն—Մարդ
Bird—պրբաւ—Թռչուն
Tree—թրի—Ծառ
Horse—հօրս—Զի
Tail—թօլ—Երկար
Short—շօրթ—Կարճ
Mine—մայն—Իմ
Ours—աւարդ—Մեր

These—տհիյդ—Ասանք
Those—տհօդ—Ասանք
There—թհէք—Հան
When—Հուէն—Ե՞րբ
Then—թհէն—Այն ատեն
Never—եէգրբ—Բնա՛ւ
No—նօ—Ո՛չ
Out—աւթ—Դուրս
Men—մէն—Մարդեր
Birds—պրբաւդ—Թռչուններ
Trees—թրիդ—Ծառեր
Horses—հօրսդ—Զիեր
Long—լօնկ—Երկայն
Broad—պրօւտ—Հայն
Yours—հուրդ—Ձեր
Theirs—տհէրբօ—Իրենցը

EXERCISE

(Review)

This is my bird.
These are your birds.
That is his horse.
Those are their horses.
Here is my tree.
There are your trees.
Where is my good dog?
When are you happy?
Now I have your ball.
Then you have my toy.
This man is a good man.
Those men are very happy.
How is your cat?
It is a lazy cat.
Mine is a pretty cat.
This tree is a tall tree.
This is a very short tree.
That is large. Those are small.

Ours is good. Theirs are bad.
Yes, Sir. No, Sir.
My good horse. Your pretty bird.
His big ball. Our small cat.
The bird. The man. A horse.
A dog. The boys. The girls.
We are men. You are boys.
I have toys. They have balls.
Here is my father. Where is your mother?
My sister and his aunt are here.
Is your brother a good man?
He has an uncle.
They have two brothers and three sisters.

ԹԻԻ 5 ՀԱՆԵԼՈՒԿԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

ԿԱՂ—ԱՆԴ—ԿԱՂԱՆԴ

Լուծեցին. — Փոքրիկն Ալիս Գ. Գալուստեան, Վեհանոյշ Կ. Սինանեան (Մայր վրժ. Գուժ Գարու), Միլթոն Ա. Մեյիքեան (Գանտիլի), Արշակ Տիմիճեան, Գեորգ Սարգիսեան, Գուրգէն Մեծաստուրեան, Պետրոս Սինէճեան (Ամերիկ. վրժ. Կէտիկ Փաշա), Էլիզապէթ Դիւրի, Նուարդ Ապաճեան, Բիէռէթ Տէւոյ, Ատրինէ Պէյլէրեան (Մամաթիա), Խաչիկ Յ. Կառավարեան, Եղ. Ծատուրեան, Սերորէ Պէրպէրեան (Պէրպէրեան վրժ.), Համբարձում Մորճիկեան (Հայ Աւետ. վրժ. Պիլէճիկ):



ԹԻԻ 6 ՀԱՆԵԼՈՒԿԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

ԱՐԱՐՍ.

Լուծեց. — Բիւզանդ Տաքէսեան (Պէրպէրեան վրժ. Սկիւտար):



Թիւ 5 և 6 բառեղծուածները միանգամայն լուծեցին. — Անժէլ Զարիֆեան, Ժիրայր Զիֆթեան, Նուարդ Փէշտիմալճեան, Գոհարիկ Տիրատուրեան և Եղ. Գուլթալէճեան (Սինանեան վրժ. Լանկա), Բարսեղ Թորոսեան, Արմինէ Սարրեան, Զապէլ, Գրիգոր և Զուարթ Արրահամեան, Կարապետ Ատարլըզլըեան, Պետրոս Վարժապետեան (Հայ Աւետ. վրժ. Պիլէճիկ), Մինաս Ն. Պարսամեան, Ազատ Պամաճեան (Նոր Դպրոց), Կարո Արովեան, Կարապետ, Թորոսեան, Ասեփան Սիսակեան, Եղուարդ Թէլլիեան, Ներսէս Վարդանեան, Գեորգ Վարդանեան, Նուարդ

Մարտիրոսեան (Պէրպէրեան վրժ. Ժարան, Սկիւտար), Մնահիւմ Լ. Նազարէթեան (Ամերիկեան վրժ. Ժարան, Կէտիկ Փաշա), Վերթոյիմ Թորաճանեան (Թորոսեան վարժարան, Մօտա), Զարեհ Ժամկոչեան, Արմինէ Մարտիկեան, Սիրարփի Կիւմրուչկերտեան (Ազգ. վրժ. Կէտիկ Փաշա), Նուարդ Թահմազեան (Սիւաշ, Սկիւտար), Յակոբ Այվադեան (Քար Դպրոց, Սկիւտար, Շաքէ Յ. Սահակեան (Եէնի Գարու, Ազգ. վրժ.), Յ. Կ. Ապաղաեան (Մայր վրժ. Գուժ Գարու), Վարդի Գահվէճեան, Փերուզիկ Զպուքճեան (Աղջկանց որբանոց Օրթագիւղ), Յակոբ Էօքիճեան (Ազգ. վրժ. Պաշաթ), Պերճուհի Սէմէրճեան (Առնաժուռ գիւղ), Յակոբ և Վարդգէս Եէմէնիճեան (Գնալը կղզի): Լուծեցին նաեւ Տիար Պէշիրեան և Ժիրայր Յովակիմեան (Մամաթիա):



Երկու հանելուկները միանգամայն առաջին լուծողը եղաւ Օր. Անժէլ Զարիֆեան, որուն փափաքին համաձայն իրեն նուէր տրուելիք վեցամսեայ «Առաւօտ»-ը կը նուիրենք Նշան Թաշիի Աղջ. որբանոցին:

ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Մէյմէկ օրինակ տարեկան «Առաւօտ» նորահասներու հանդէպ կը նուիրեն. — Տեարք Եսուար Յակոբեան և Հրանտ Տէր Սարգիսեան Հաճրնի որբանոցին, Կարապետ Յակոբովիչ Սինանեան վրժ.ի որբերուն, Երեմիա Պաշուճեան Երուսաղէմատան որբանոցին, Գառպար Եկաւեան Այնթապի որբանոցին, Լեւոն Քնարեան Մաքրի Գիւղի որբանոցին, Վահան Վարդերեսեան Չօր. Իգմիտի որբանոցին, Գրիգոր Հայոցեան Նարլը Գարուի որբանոցին:

ԿՈՊԵՆՀԱԳԵՆԻ ԽԱՉԱՏՈՒԲԵԱՆ

ԱՌԵՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1900 ԻՆ

Անգլոն Պահնե Գարու: Մեյփոստ Խան—Հեռագրայն Սրահայույ 319
 Թովային գործակալութիւն, ներկայացուցչութիւն, ներածում, արտածում, բեռնա-
 տարութիւն, մարքային գործառնութիւն, յանձնակատարութիւն, ստորագրում եւ փոխադ-
 րութիւն: Մարտային գործառնութեանց ճիւղը ապրանքին Պոլիս ժամանումն 48
 ժամ վերջ մարտի գործողութիւնները կը լրացնէ: Փոխադրութեան ճիւղը ամէն օր
 ապրանք կ'ընդունի Սեւ Ծովի եւ Միջերկրականի օտմ. եւ օտար նաւանակատ-
 ներուն համար:



Բերա, Մեծ Փողոց, Թ. 433 Սանթա Մարիա եկեղեցին դով—Թէլէֆոն. Բերա 2032
 Ռուսական, ամերիկեան եւ եւրոպական ամէն տեսակ մաշտակներու
 ճոխ մթերք, սրտադատ եւ չափու վրայ խիստ ճաշակատար:
 Գիները չափաւոր: Մ. ՕՀԱՆԵԱՆ

ՏԲԹ. Ա. ՍԵՍԵՐՋԵԱՆ

Գումգարու, Պատրիարքարանի կարգը
 Խղճամբա դարձանում:

Հիւանդ կ'ընդունի նաեւ ամէն օրժաճի Յէն
 5, Գանձարճըար, Էվրօրիոսի ղեզարանը:

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԴԻ ՓԱՍՏԱՐԱՆՆԵՐ
 Մ. ԱԳԸԼԸԵԱՆ
 ԵՒ

Կ. ԲԱՐՈՒՆԻ

Կը ստանձնեն ամէն տեսակ դատերու
 պաշտպանութիւնը, ամէն բեզուէ խմբու-
 գրութիւններ եւ Թարգմանութիւններ,
 նմանապէս օտար ղեալանաւորաց ժող
 կատարուելիք ղիմումներ: Արագ եւ
 խղճամբա գործունէութիւն: Խորհրդակ-
 ցութիւնք ծրի: Հասցէ, Թարագճըար,
 Բեաթիայ Ատիլի գտնուած Ստաթըր
 իւան Թիւ 9:

ՏԲԹ. Վ. ՊԱՆԱՊԱՆ

Նախկին ըմբշի ճրանս. արեւել.
 Էգէմք

ՄԱՍՆԱԳԷՏ

Վենետիկան, կանանց եւ մարմա-
 յին հիւանդութեանց, հիւանդ կ'ը-
 նդունի ամէն օր Պահնե Գարու,
 Համբոթիէ Թիւրպէտիմ ղէմ,
 Իւթիւնեան ղեզարանի կից իր
 մասնաւոր դարձանաւորներ:

ՏՈՒՐՈՐ

ՆԵՐՍԵՍ ՍԱՆՏԱՆՔԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ

ԱԿԱՆՁԻ, ԳԻՐԻ ԵՒ ԿՈԿՈՐԴԻ
 ՀԻԻԱՆԳՈՒԵՅՆ

Հիւանդ կ'ընդունի ամէն օր, բացի
 կիր.է կէսօրէ վերջ չեն 6 Պահնե Գարու,
 Համբոթիէ Թիւրպէտիմ ղէմ Արիկ Իւթիւ-
 նեան ղեզարանի վերձայագիր:

ՆՐԱՍՈՒ ՆԱԽԱՆՁԱՆՆԵՐԻՐՆԵՐ

Մարտի եւ ճաշակատար հազուա օրնենալու համար պէտք է անպայման
 գիմել «Հասարակ» Ակադեմիայէն վկայեալ

Ա. Լա Մօտ դերձակատան

Հասցէ՝ Հալաթիա, Վոյվոտա ճամուէ, Թիւ 122 անգլ. նմլան. ժող